

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 44/2

12 սեպտեմբերի 2013 թ.

Քննարկվեց Ա/Ձ Արտակ Ավագյանի 13.08.2013 թ-ի դիմում-բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ 05.08.2013 թ-ի թիվ 2123879 ստուգման ակտի դեմ:

Ա/Ձ Արտակ Ավագյանի բողոքում մասնավորապես նշված է.

2013 թ-ի հուլիսի 11-ին գրանցվել եմ ՀՀ պետական ռեզիստրի Արմավիրի տարածքային բաժնում և ստացել եմ պետական ռեզիստրի թիվ 01Ա925416 վկայականը: Վկայականում նշվել է հաշվառման և բնակության վայրիս հասցեն՝ ք.Արմավիր, Բաղրամյան 18 շենք, բնակարան 9: Որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելու նպատակը սկզբնականում եղել է հենց իմ բնակության վայրում պատճենահանման գործունեություն ծավալելը, քանի որ բնակարանս գտնվում է նշված շենքի 1-ին հարկում: Հետագայում տեղեկացել եմ, որ Արմավիրի մարզի Հացիկ գյուղում գտնվող հանրային սննդի օբյեկտը տրվում է վարձակալությամբ և սկսել եմ հետաքրքրվել դրանով՝ նպատակ ունենալով այն վարձակալել և շահագործել, որի համար մի քանի անգամ այցելել եմ նշված տարածք: Արդյունքում պարզել եմ, որ օբյեկտը գործող է, սակայն օբյեկտի շինության վրա իրականացվում են շինարարական աշխատանքներ և այն կտրվի վարձակալությամբ միայն այդ աշխատանքներն ավարտվելուց հետո:

Այցելություններից մեկի ժամանակ նշված տարածքում հանդիպեցի Արմավիրի հարկային տեսչության աշխատակիցներին, որոնք հարց ու փորձ էին անում օբյեկտում աշխատանք կատարող բանվորներին: Վերջիններից մեկը, որին չեմ էլ ճանաչում, մինչև օբյեկտին մոտենալս առանց եղելությունն իմանալու տեսուչներին մատնացույց էր արել ինձ և իմ կարծիքով հայտնել, որ ես եմ օբյեկտը վարձակալել կամ նման մի բան, սակայն հարկային տեսուչների կասկածամիտ հայացքներից և անհեթեթ հարցերից ամեն ինչ պարզ դարձավ, ես արդեն հայտնվեցի հարկային տեսուչների նշանառության տակ: Դրանից հետո որոշեցի այլևս չայցելել նշված տարածք ավելորդ խոսակցություններից և կասկածներից խուսափելու համար, սակայն դա արդյունք չտվեց:

Մի քանի օր անց, նույն տեսուչներից մեկը՝ Արթուր Ղազարյանը զանգահարեց իմ բջջային հեռախոսահամարին և հրավիրեց հարկային տեսչություն՝ ինչ-որ փաստաթղթերի ծանոթանալու և դրանք ստանալու համար: Ես ներկայացա հարկային տեսչություն, որտեղ ինձ ներկայացրեցին հանձնարարագրի և ստուգման ակտի նախագծի օրինակները հայտնելով, որ իբր իմ օբյեկտում իրականացվում է գործունեություն, որտեղ ես արդեն իսկ ունեմ աշխատակից ումն Արման Հարությունյան անունով, որը երևի տեսուչների հետ համագործակցող անձնավորություն է: Ըստ տեսուչների, նշված օբյեկտից առևտուր է կատարվել և այնտեղ հսկիչ-դրամարկղային մեքենա տեղադրված չլինելու պատճառով կազմվել է համապատասխան ակտ և իմ նկատմամբ հաշվարկվել տուգանք 300.000 դրամի չափով: Զարմանքից ու զայրույթից ուղղակի շոկային վիճակում հայտնվեցի, փորձեցի հասկացնել աշխատակիցներին, որ դա թյուրիմացություն է և, որ ես դեռևս առնչություն չունեմ այդ օբյեկտի հետ, ընդամենը հետաքրքրվում եմ դրանով: Սակայն, փորձերս անցան ապարդյուն, ես այդպես էլ չկարողացա տեսուչներին ներկայացնել իրականությունը: Մեր խոսակցությունը աստիճանաբար վերածվում էր վիճաբանության և դրանից խուսափելու համար ուղղակի հրաժարվեցի ստորագրել որևէ փաստաթղթի տակ և ստանալ դրանց օրինակները ու հեռացա հարկային տեսչությունից: Մի քանի օր անց, մասնավորապես՝ 26.07.2013 թ-ին, փոստային ծառայության միջոցով ստացել եմ Արմավիրի ՏՀՏ պետի թիվ 2123879 հանձնարարագիրը և ակտի նախագիծը, իսկ 06.08.2013 թ-ին՝ թիվ 2123879 ակտի օրինակը:

Ակնհայտ է, որ նշված ակտը կազմվել է հիմքերի բացակայության պայմաններում, քանի որ նախ հավաստիացնում եմ, որ նշված օբյեկտը այդ ժամանակաշրջանում բացարձակ չէր գործում, ավելին՝ այնտեղ իրականացվում էին շինարարական աշխատանքներ, որոնք մինչ օրս էլ

շարունակվում են: Նման պայմաններում այնտեղ գործունեություն իրականացնել հնարավոր չէր, դա ես պարզել եմ իմ այցելության ընթացքում: Ինչ վերաբերում է ակտում շարադրվածին, թե <...իմ աշխատակից Արման Հարությունյանի կողմից և այլն...>, դա նորից եմ կրկնում ուղղակի ծիծաղելի է, քանի որ ես ընդհանրապես աշխատակից չունեմ և դրա վերաբերյալ հարկային մարմին ոչ մի տեղեկություն չեմ ներկայացրել:

Վերը շարադրվածից ելնելով և հայցելով Ձեր անկողմնակալ վերաբերմունքն այս հարցի լուծմանը, խնդրում եմ չեղյալ համարել Արմավիրի S<S 05.08.2013 թ-ի թիվ 2123879 ստուգման ակտը:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ դիմում-բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ Արմավիրի S<S պետի 23.07.2013 թ-ի թիվ 2123879 հանձնարարագրի Ա/Ձ Արտակ Ավագյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է « ԿԱ ՊԵԿ Արմավիրի S<S 05.08.2013 թ-ի թիվ 2123879 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 363.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետում մասնավորապես նշված է, որ հարկային տեսուչներ Ա.Ղազարյանը, Ա.Շառոյանը և 1-ին կարգի մասնագետ Հ.Մկրտչյանը 23.07.2013 թ-ին ժամը 17:05-ին Ա/Ձ Արտակ Ավագյանին պատկանող Արմավիրի մարզի Հացիկ գյուղում, Արմավիր-Հացիկ մայրուղու աջ հատվածում գործող հանրային սննդի կետից գնել են 2 հատ շաուրմա և գազավորված ըմպելիք 2000 դրամ ընդհանուր արժողությամբ, որի գումարը Ա/Ձ Արտակ Ավագյանի աշխատակից՝ Խանջյան գյուղի բնակիչ Արման Հարությունյանի կողմից չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Շ հաշվետվությունը հնարավոր չեղավ դուրս բերել նշված հասցեում ՀԴՄ ներդրված (գրանցված) չլինելու պատճառով:

Ստուգմամբ պարզվեց, որ Ա/Ձ Արտակ Ավագյանի կողմից խախտվել են « Կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները: Արդյունքում կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

Ստուգման ակտի 2-րդ կետում մասնավորապես նշված է, որ Ա/Ձ Արտակ Ավագյանը Արմավիրի մարզի Հացիկ գյուղում, Արմավիր-Հացիկ մայրուղու աջ հատվածում գտնվող շինությունում իրականացնում է հանրային սննդի գործունեություն՝ 18 մ.ք. սպասարկման սրահ ունեցող տարածքում: Ա/Ձ Արտակ Ավագյանը հուլիս ամսվա համար Արմավիրի S<S չի ներկայացրել արտոնագրային վճար վճարող համարվելու համար հայտարարություն: «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն հաշվարկվում է տուգանք՝ գումարով 63.000 դրամ:

Քննարկման ընթացքում ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին, որ իրենց հսկողությանը հանձնված տարածքի հերթական շրջայցի ժամանակ հայտնաբերել են, որ Արմավիրի մարզի Հացիկ գյուղում, Արմավիր-Հացիկ մայրուղու աջ հատվածում գտնվող շինությունում իրականացվում է հանրային սննդի գործունեություն: Մտտենալով շինությանը պարզել են, որ հանրային սննդի գործունեությունն իրականացվում է Խանջյան գյուղի բնակիչ Արման Հարությունյանի միջոցով: Վերջինիցս պահանջել են ներկայացնել գործունեությունը բնութագրող համապատասխան փաստաթղթերը, ինչին Արման Հարությունյանը պատասխանել է, որ հանրային սննդի օբյեկտը պատկանում է Ա/Ձ Արտակ Ավագյանին, իսկ ինքն ընդամենը հանդիսանում է նրա աշխատակիցը: Հարկային տեսուչների պահանջով Արման Հարությունյանը հեռախոսով կապվել է Ա/Ձ Արտակ Ավագյանի հետ և հայտնել տեսուչների այցելության և նրանց

կողմից պահանջվող փաստաթղթերի մասին: Ա/Ձ Արտակ Ավագյանը պատասխանել է, որ իր կողմից իրականացվում է շինարարություն, որի ավարտից հետո միայն հանրային սննդի գործունեությունը կստանա համապատասխան գրանցում: Հարկային տեսուչները զգուշացրել են իրականացվող գործունեությունը համապատասխան գրանցում ստանալու անհրաժեշտության մասին, ինչպես նաև այն չիրականացնելու դեպքում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցների մասին, և հեռացել են: Մի քանի ժամ հետո հարկային տեսուչները կրկին անգամ այցելել են վերոգրյալ տարածք և արձանագրել, որ հանրային սննդի օբյեկտն այնուհանդերձ շարունակում է իր գործունեությունը:

Ելնելով վերոգրյալից համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Արմավիրի ՏՀՏ պետի 23.07.2013 թ-ի թիվ 2123879 հանձնարարագրի Ա/Ձ Արտակ Ավագյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում, որի արդյունքում կազմված ակտով արձանագրվել է ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի և <Արտոնագրային վճարների մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջների խախտման փաստը:

Հարկ է նշել, որ ստուգման ակտով համապատասխան խախտումներն արձանագրվել են 23.07.2013 թ-ին, իսկ հաջորդ օրը՝ 24.07.2013 թ-ին, Ա/Ձ Արտակ Ավագյանի կողմից Արմավիրի ՏՀՏ է ներկայացվել արտոնագրային վճար վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, ինչպես նաև ՀԴՄ-ն՝ սահմանված կարգով գրանցելու համար:

Բացի այդ, համաձայն Հացիկի գյուղապետարանի կողմից տրամադրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի, ստուգման ակտում հիշատակված հասցեում գտնվող անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է Ա/Ձ Արտակ Ավագյանին:

Հանձնաժողովի 03.09.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը, բողոքը և բողոքին առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ